24.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 2163 - Ա որոշման

Ն Ե Ր Դ Ր Ո Ւ Մ Ա Յ Ի Ն Ծ Ր Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ «ՌԵՆԵՍԱՆՍ» ԹԱՂԱՄԱՍԻ ԿԱՌՈՒՅՑՄԱՆ

1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո Գյումրի քաղաքում իրականացվել են բնակարանային շինարարության ծրագրեր, որոնց շրջանակներում բնակարանները հատկացվել են սեփականության իրավունքով, անհատույց, բայց ոչ ավելի, քան երկրաշարժի հետևանքով ընտանիքի կողմից կորցրած բնակարանի չափով (սենյակների թվով): Այսինքն, բնակարան ստացած ընտանիքների մի մասն ի սկզբանե՝ բնակարան ստանալու պահից, ունի բնակարանային պայմանների բարելավման կարիք:

Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի դեկտեմբերի 20-ի N 1658-Ա որոշման շրջանակներում 2019 թվականի ընթացքում իրականացվել է 1988 թվականի դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժից հետո աղետի գոտու բնակավայրերում տեղադրված/կառուցված ոչ հիմնական շինությունների փաստագրում: Փաստագրման արդյունքների համաձայն Գյումրի քաղաքում առկա է շուրջ 2800 ոչ հիմնական շինություն (տնակ):

2019 թվականի ընթացքում հավաքագրված տվյալների համաձայն Գյումրի քաղաքում մոտ 100 բազմաբնակարան շենք գտնվում է անբավարար տեխնիկական վիճակում (շենքերն ունեն 3-րդ կամ 4-րդ աստիճանի վնասվածություն):

Բացի այդ, առկա է նաև ձևավորված պետական պարտավորություն՝ սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված անձանց, փախստականների, զոհված և հաշմանդամ դարձած զինծառայողների անօթևան ընտանիքների նկատմամբ:

Մյուս կողմից, Գյումրիում գոյություն չունի բնակարանային առաջնային շուկա, որը հնարավորություն կընձեռի միջին և բարձր եկամուտ ունեցող քաղաքացիներին ձեռք բերել բնակարաններ՝ օգտվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով նախատեսված՝ եկամտահարկի վերադարձման հնարավորությունից:

Թվարկված փաստերի վերլուծությունը հնարավորություն է տալիս արձանագրել, որ Գյումրիում առկա է թե անօթևանության, թե բնակարանային պայմանների բարելավման կարիքի բարձր մակարդակ:

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքում «Ռենեսանս» թաղամասի կառուցման ներդրումային ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) նպատակը՝ Գյումրի քաղաքում քաղաքաշինական և որակական առումով նոր բնակելի թաղամասի կառուցումն է, որը՝ տնտեսական աշխուժություն և նոր աշխատատեղեր ստեղծելուց, քաղաքի կենտրոնական հատվածի մի մասի քաղաքաշինական միջավայրի համալիր կառուցապատման միջոցով նոր շունչ հաղորդելուց բացի, կներառի թե՛ բնակապահովման և թե՛ բնակարանային պայմանների բարելավման հնարավորություն՝ տարբեր եկամուտ ունեցող ընտանիքների համար:

Ներդրումային ծրագրի շրջանակներում կառուցապատման համար ներդրողին է տրամադրվելու Գյումրի քաղաքի Ղարսի խճուղուն հարող 21.07 հա մակերեսով տարածքը:

Ներդրումային ծրագրի շրջանակներում Ներդրողի կողմից ստանձնած պարտավորությունների կատարման ժամկետ է սահմանվում 5 (հինգ) տարի (4 փուլով)՝ այդ աշխատանքների իրականացման համար տրված շինարարության թույլտվությունների տրամադրման պահից:

Ծրագրի նախնական արժեքը կազմում է մոտ 100 մլն ԱՄՆ դոլար (ներառյալ ԱԱՀ-ն):

Միայն շինարարության փուլում նախատեսվում է միջինում ստեղծել առնվազն 300 աշխատատեղ (չհաշված մուլտիպլիկատիվ էֆեկտը):

Նախատեսվում է, որ թաղամասում՝ պահպանելով տարածքում առկա պատմա-մշակութային միջավայրը և հուշարձան հանդիսացող շենքերը, կառուցվելու են ժամանակակից և ավանդական ճարտարապետության համադրությամբ կառուցված բազմաբնակարան շենքեր, որոնց ճակատային 1-ին հարկերը կնախատեսվեն փոքր և միջին բիզնեսին, հասարակական նշանակության հաստատություններին: Թաղամասում կկառուցվեն դպրոց, մանկապարտեզ, մանկական խաղահրապարակներ, զբոսուղիներ, ավտոկայանա-տեղեր, բարձրակարգ կենցաղի համար անհրաժեշտ այլ օբյեկտներ, հոգևոր և մշակութային կենտրոններ, հյուրանոց, կապահովվեն բոլոր պայմանները ժամանակակից քաղաքային միջավայր և մշակույթ ձևավորելու համար առաջին հերթին երիտասարդ ընտանիքների պահանջներին համահունչ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ